

Նախարարական եկամուտներ-2009թ.

2010թ.-ի օգոստոսին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ՀՀ Պետական եկամուտների կոմիտեից ստացավ ՀՀ բոլոր նախարարների 2009թ.-ի գույքի եւ եկամուտների հայտարարագրերում ներառված տվյալների մասին տեղեկանքները: Չտրամադրվեցին միայն Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորյանի տվյալները, քանի որ նա նախարարի պաշտոնը զբաղեցնում է 2010թ.-ի հունիսի 28-ից: Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արթուր Պետրոսյանը, Տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը եւ Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը 2009թ.-ի ընթացքում զբաղեցրել են այլ պաշտոններ եւ գույքի եւ եկամուտների հայտարարագրեր ներկայացրել են այլ պաշտոններ զբաղեցնելու ժամանակ ստացած եկամուտների վերաբերյալ: Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արթուր Պետրոսյանը 2009թ.-ին զբաղեցրել է ՀՀ Աշխատանքի պետական տեսչության պետի պաշտոնը, Տրանսպորտի եւ կապի նախարար Մանուկ Վարդանյանը եղել է ՀՀ Նախագահի խորհրդական իսկ Արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանը զբաղեցրել է ՀՀ Ոստիկանության պետի առաջին տեղակալի պաշտոնը:

ՀՀ Պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկանքների վերլուծությունը ցույց տվեց, որ 2009 թվականին գույքի եւ եկամուտների հայտարարագիր ներկայացրած 17 նախարարներից միայն 5-ն են 2009թ.-ի ընթացքում օտարել կամ ձեռք բերել որեւէ շարժական կամ անշարժ գույք: Այսպես, Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արթուր Պետրոսյանը, պաշտոնավարելով ՀՀ Աշխատանքի պետական տեսչության պետի պաշտոնում, 2009թ.-ին օտարել է «Մերսեդես C 180» մակնիշի ավտոմեքենա, իսկ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանն օտարել է «PORSHE» մակնիշի ավտոմեքենա: Փոխարենը երկու նախարարներն էլ ոչինչ ձեռք չեն բերել: Բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը ձեռք է բերել 3 շենք եւ շինություն՝ փոխարենը ոչինչ չօտարելով: Առանց որեւէ բան օտարելու նոր գույք ձեռք են բերել նաեւ Արդարադատության նախարար Գեորգ Դանիելյանը եւ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը՝ գնելով մեկական շենք եւ շինություն: 2009թ.-ին գույքով կամ արտարժույթով եկամուտ ոչ մի նախարար չի ունեցել:

Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանին հաջորդում են Բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը եւ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը՝ համապատասխանաբար 131.061.616 դրամ եւ 39.036.547 դրամ եկամուտներով: Նշենք, որ Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանը պահպանել է 2008թ.-ի իր ցուցանիշը. նա ամենաշատ եկամուտն ստացած նախարարների ցուցակում երրորդն էր նաեւ 2008թ.-ին՝ 18.823.430 դրամ եկամուտով:

2009թ.-ին ամենքիչ եկամուտն ունեցել է Սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարար Արթուր Պետրոսյանը՝ 857.421 դրամ: Նրան հաջորդում են Փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեորգյանը եւ Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը՝ համապատասխանաբար 3.152.813 դրամ եւ 3.190.800 դրամ եկամուտներով: Մնացած նախարարների՝ 2009թ.-ին ստացած եկամուտի չափը տատանվում է 3.5-28.8մլն դրամի սահմաններում: Նշենք նաեւ, որ 2009 թվականին գույքի եւ եկամուտների հայտարարագիր ներկայացրած բոլոր նախարարները միասին 2009թ.-ի ընթացքում ունեցել են 604.347.122 դրամ եկամուտ:

2008թ.-ի համեմատ 2009թ.-ին հարստացած կամ աղքատացած նախարարները. 2008թ.-ին պաշտոնավարած 18 նախարարներից 2009թ.-ին իրենց պաշտոնում մնացել եւ նախարարի պաշտոնի համար գույքի եւ եկամուտների հայտարարագրեր ներկայացրել են 14-ը: Համեմատենք այդ 14 նախարարների եկամուտների փոփոխությունը 2008-2009թ.թ.-ի ընթացքում.

- 2008թ.-ին ամենաշատ եկամուտն (381.607.396 դրամ) ունեցած Առողջապահության նախարար Հարություն Քուշկյանը 2009թ.-ին նույնպես ամենաշատ եկամուտը ստացած նախարարների ցուցակում առաջինն է՝ 341.615.000 դրամ եկամուտով: Նրա եկամուտը 2008թ.-ի համեմատությամբ պակասել է 39.992.396 դրամով:
- Բնապահպանության նախարար Արամ Հարությունյանի եկամուտը 2009թ.-ին ավելացել է 128.155.438 դրամով՝ ավելի քան 45 անգամ՝ 2.906.178 դրամից դառնալով 131.061.616 դրամ:
- Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի եկամուտը 2009թ.-ին ավելացել է 16.831.303 դրամով՝ ավելի քան 2 անգամ՝ 12.005.249 դրամից դառնալով 28.836.552 դրամ:
- Կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի եկամուտը 2009թ.-ին ավելացել է 20.213.117 դրամով՝ ավելի քան 2 անգամ՝ 18.823.430 դրամից դառնալով 39.036.547 դրամ:
- 2008թ.-ին ամենաքիչ եկամուտն (2.903.800 դրամ) ունեցած Մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը՝ 2009թ.-ի ընթացքում ստացել է 3.190.800 եկամուտ՝ բարելավելով նախորդ տարվա իր ցուցանիշը 287.000 դրամով:
- Արտաքին գործերի նախարար Էդվարդ Նալբանդյանը 2008թ.-ին ստացած 2.840.049 դրամ, 13.173 Եվրո եկամտի փոխարեն 2009թ.-ին ստացել է 5.722.869 դրամ եկամուտ:

- Էներգետիկայի եւ բնական պաշարների նախարար Արմեն Մովսիսյանի եկամուտը 2009թ.-ին ավելացել է 161.351 դրամով՝ 3.430.669 դրամից դառնալով 3.592.020 դրամ:
- Ֆինանսների նախարար Տիգրան Դավթյանի եկամուտը 2009թ.-ին նվազել է 624.000 դրամով՝ 8.912.000 դրամից դառնալով 8.288.000 դրամ:
- Քաղաքաշինության նախարար Վարդան Վարդանյանի եկամուտը 2009թ.-ին ավելացել է 474.540 դրամով՝ 3.662.180 դրամից դառնալով 4.136.720 դրամ:
- Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանի եկամուտը 2009թ.-ին ավելացել է 592.662 դրամով՝ 5.477.009 դրամից դառնալով 6.069.671 դրամ:
- Էկոնոմիկայի նախարար Ներսես Երիցյանի եկամուտը 2009թ.-ին ավելացել է 1.305.098 դրամով՝ 3.523.840 դրամից դառնալով 4.828.938 դրամ:
- Փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմեն Գեւորգյանի եկամուտը 2009թ.-ին նվազել է 466.780 դրամով՝ 3.619.593 դրամից դառնալով 3.152.813 դրամ:
- Արդարադատության նախարար Գեւորգ Դանիելյանի եկամուտը 2009թ.-ին նվազել է 702.141 դրամով՝ 11.495.023 դրամից դառնալով 10.792.882 դրամ:
- Գյուղատնտեսության նախարար Գերասիմ Ալավերդյանը 2008թ.-ին ստացած 9.722.600 դրամ եւ 10.000 ԱՄՆ դոլար եկամտի փոխարեն 2009թ.-ին ստացել է 4.409.332 դրամ եկամուտ: